

**Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ
2018**

**«Գյումրիում գործազուրկների համար սոցիալ-կրթական կենտրոնի բարելավման
ծրագրի» ավարտի արարողություն**

2021թ. փետրվարի 26-ին, Շիրակի մարզի, Գյումրիի ՀԱԵ Շիրակի թեմի Սոցիալ-կրթական կենտրոնում տեղի ունեցավ «Գյումրիում գործազուրկների համար սոցիալ կրթական կենտրոնի բարելավման» մինչև 26.923 ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային ծրագրի ավարտի արարողությունը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում: Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Ջուն Յամադան, Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, Ռուբեն Սանոյանը, ՀԱԵ Շիրակի թեմի առաջնորդ Միքայել արք. Աջապահյանը և այլոք:

2019-2020 թ.թ. ՀԱԵ Շիրակի թեմի Սոցիալ-կրթական կենտրոնն իրականացրել է «Մասնագիտական ուսուցումներ Շիրակի մարզի գործազուրկների համար» ծրագիրը: Ծրագրի նպատակն է եղել նպաստել Շիրակի մարզի և Գյումրի քաղաքի առավել խոցելի ընտանիքների գործազուրկ կանանց և տղամարդկանց հնարավորությունների և ներուժի զարգացմանը՝ մասնագիտական և արհեստագործական դասընթացների անցկացման և զբաղվածության ապահովման միջոցով: Ծրագրի շրջանակներում վերանորոգվել, ժամանակակից տեխնիկայով և սարքավորումներով է կահավորվել կենտրոնում դասընթացների համար նախատեսված սենյակները, ինչը այժմ հնարավորություն է տալիս ավելի քան 105 գործազուրկ կանանց և տղամարդկանց հաճախել դիմահարդարման, վարսահարդարման, մատնահարդարման, թխվածքների պատրաստման ու ձևավորման և խոհարարության դասընթացներին:

Ջերմորեն ողջունելով բոլոր հյուրերին՝ Շիրակի թեմի առաջնորդ Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանն իր շնորհակալությունը հայտնեց դեսպան Յամադային և Ճապոնիայի ժողովրդին աջակցության համար, ինչը հնարավորություն ընձեռեց սոցիալ-կրթական կենտրոնին իրականացնել տվյալ ծրագիրը:

Իր հերթին դեսպան Յամադան շնորհավորեց հաջողությամբ իրականացված ծրագրի համար, ու շեշտեց որ Ճապոնիան բարձր է գնահատում ենթակառուցվածքների բարելավումը տնտեսական աճի և զարգացման համար: Այս օժանդակությունը այն շարունակական քայլերից մեկն է առաջնային մակարդակում աշխարհը զարգացման ավելի կայուն ուղու վրա դնելու համար: Դեսպան Յամադան հավելեց, որ սոցիալ-

տնտեսական առաջընթացի գրավականը հենց մասնագիտական կրթությունն է ու Գյումրիում այս կենտրոնը շատերին հնարավորություն կտա մասնագիտություն ունենալ ու կապահովվի նրանց սոցիալական ներգրավվածությունը:

Ելույթների ավարտից հետո, դեսպան Յամադան ծրագրի մասնակիցներին հանձնեց իրենց վկայականները: Արքեպիսկոպոս Աջապահյանը և փոխքաղաքապետ Սանոյանը իրենց հերթին շնորհակալագրեր հանձնեցին դեսպան Յամադային տվյալ շրագրում իր ներդրման համար:



Դեսպան Յամադայի շրջայցը ՀԱԵ Շիրակի թեմի
Սոցիալ-կրթական կենտրոնի վերանորոգված և
կահավորված սենյակներ



ՀԱԵ Շիրակի թեմի Սոցիալ-կրթական կենտրոնի
ուսանողները նոր սարքավորումները
օգտագործելիս



Դեսպան Յամադան սոցիալ-կրթական
կենտրոնի ուսանողների կողմից պատրաստած
տորթը կտրելիս



ՀԱԵ Շիրակի թեմի առաջնորդ Միքայել արք.
Աջապահյանի ողջույնի խոսքը



Դեսպան Յամադայի շնորհավորական ուղերձը



Շնորհակալագիր դեսպան Յամադային, ՀԱԵ
Շիրակի թեմի առաջնորդ Միքայել արք.
Աջապահյանի կողմից



Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ
պարոն Սանոյանը, Գյումրի համայնքի ղեկավարի
կողմից դեսպան Յամադային փոխանցեց
շնորհակալագիր



Դեսպան Յամադան «Մասնագիտական
ուսուցումներ Շիրակի մարզի գործազուրկների
համար» ծրագրի շրջանավարտներին հանձնեց
հավաստագրեր